Փորձագիտական հարթակային քննարկում սեռական ոլորտում առկա ատելության խոսքի ու ատելության քարոզի թեմայով

Երեւան, ապրիլի 30, 2019

Հանդիպման սկզբում փորձագետները քննարկեցին միջազգային փորձը: Փորձագետներից մեկը ներկայացնելով Եվրոպական երկրներում առկա փորձը նշեց, որ ինչ-որ մի փուլ հասարակությունը սեռական կրթություն է ստացել և եղել է ժամանակավոր էֆեկտ, սակայն հետագայում սեռական հողի վրա բռնության վիճակագրությամբ այդ երկրները մասամբ ետընթաց են ապրել: Այդ երկրների շրջանում առանձնացվեց Շվեդիան, որտեղ սեռական դաստիարակություն առարկան դասավանդելիս ի սկզբանե այլ մոտեցումներ են եղել: Փորձագետներից մեկը նշեց, որ կասկածում է, թե իրավունքի դաշտում հնարավոր լինի հասնել խնդրի լուծմանը: մարդկանց իրավագիտակցությունը բարձրացնելով գուցե նրանք արտաքուստ համակերպվեն սեռական փոքրամասնությունների իրավունքների հետ, կամ պարզապես զսպվածություն դրսևորեն, սակայն արդյո՞ք դա լուծում է խնդիրը: Հայաստանի պես արեւելյան, գերազանցապես իռացիոնալ մտածողություն ունեցող հասարակություններում մարդկային ինքնության հանդեպ հարգանքը քանի դեռ չի ձեւավորվել համոզմունքի ուժով, նույնասեռականի, ԼԳԲՏ որեւէ ներկայացուցչի բարոյական լինելու հնարավորությունը քանի դեռ չի ներկայացվել եւ ապացուցվել հասարակությանը, այն, օրենքի ուժով լոկ «մարդու իրավունքների հարգման» պարտադրանքով երբեք իրապես չի համակերպվի եւ չի հանդուրժի սեռական տարբեր ինքնություն ունեցող մարդկանց: դա էլ, իր հերթին, մշտապես ակտուալ կպահի այդ մարդկանց հանդեպ ատելության խոսքի օջախները եւ դրանց՝ պարբերաբար բռնկումը տարբեր առիթներով:

Շատ կարևոր է, թե մարդ-պետություն հարաբերությունները ինչպես են դրսևորվում: Պատիժները կարող են առաջացնել ինչ-որ արդյունք, առաջացնելով կեղծ բարեպաշտի կերպարանքը, սակայն դրան էլ գալիս է հակադրվելու այն իրողությունը, որ զարգացած երկրներում սեռական անհանդուրժողականության հենքով բռնությունների թիվը նոր աճ է արձանագրում: Մյուս փորձագետը ով համաձայնեց վերոնշյալ մտքի հետ, շեշտեց, որ իր համար շատ կարևոր է, թե իշխանական մարմինները ինչպես են արձագանքում այս իրողություններին: Ըստ փորձագետի, այդ մարմինները ուզում են այդ պատասխանատվությունը իրենց վրայից գցեն և օրինակ, նորօրյա իշխանությունները փորձում են արդարացնել տրանսգենդերի ելույթը ԱԺ-ում՝ մեղադրելով նախկին իշխանություններին, որոնց օրոք այդ տրանսգենդերին համապատասխան անձնագիր է տրվել, դրանից բխող բոլոր քաղաքացիական իրավունքներով հանդերձ: Իր կարծիքով,

իշխանությունների նման կրավորական կեցվածքը չի նպաստում խնդրի լուծմանը, ատելության խոսքի նվազմանը: Իհարկե, նոր իշխանությունները նաեւ չեն հանդիսանում ատելության խոսքի, առավելեւս՝ քարոզի կրողներ ԼԳԲՏ մարդկանց հանդեպ, ինչպիսին որ նախկին իշխանություններն էին: Սակայն հստակ դիրքորոշման բացակայությունը, այս ոլորտում ատելության եւ անհանդուրժողականության կրողների եւ դրանց զոհերի միջեւ հաճախ հավասարության նշան դնելը ցույց է տալիս, որ գործող իշխանությունը տուրք է տալիս ամբոխավարությանը եւ փորձում է հաճոյանալ կարծրատիպերով առաջնորդվող հասարակության մեծամասնությանը: Մինչդեռ գոնե բռնության կոչերը պետք է միանշանակ դատապարտվեին՝ անկախ թե ով է դրանք արել, և ում են դրանք ուղղված եղել:

Եվրոպական երկրներից տասներկուսում ատելության խոսքը քրեորեն պատժելի է, և դա կանխարգելիչ բնույթ է կրում: Այդ իսկ պատճառով Եվրոպայում այսօր էլ ատելության խոսքն ու ատելության քարոզը աննշան ծավալներ ունի: Սակայն փորձագետներից մեկը նշեց, որ դա բավարար չէ, որպեսզի վերանա ատելության խոսքը, և համարեց դա ոչ բավարար քայլ խնդրի ամբողջական լուծմանը հասնելու համար: Նշվեց, որ շատ կարևոր է ուսումնասիրել հասարակական կարծիքը, մոտեցումները և վերլուծել դրանց ազգային և մշակութային բաղադրիչները, որոնք բազմաթիվ են և տարբեր բոլոր երկրներում: Այն ինչ մեթոդով Հայաստանում փորձում են պայքարել ատելության խոսքի դեմ մեր հասարակության համար հաճախ ավելի հակադարձող, ագրեսիվ էներգիա և էմոցիա ստեղծող գործողությունների շարք է: Երբ արտառոց տեղեկատվական առիթների ձեւով կոշտ միջամտություններ են արվում հասարակական կյանքում, ապա հաճախ դա խիստ բացասական արձագանքի է արժանանում, և եթե մենք կարողանանք սեռական կրթության միջոցով ոչ թե պարզապես ներշնչենք նոր սերնդին, որ սեռական վարքը դա յուրաքանչյուրի սեռական ընտրության՝ կողմնորոշման խնդիրն է, եւ ուրեմն պետք է հարգել նրա ընտրությունը, այլ անհատական մոտեցում ցույց տանք յուրաքանչյուր դեպքի համար և փորձենք ներկայացնել դրանք մշակութային լույսի ներքո: Դա, իհարկե, բավական երկարաժամկետ ռազմավարության իրականացում է պահանջում:

Նշվեց նաև վերջերս լույս տեսած գրքի մասին, որը նախատեսված էր ծնողների համար և փորձագետներից մեկը կարծիք հայտնեց, որ անփույթ վերաբերմունք կա գրքի ստեղծողների կողմից, և չի նկատվում աշխատանք հոգեբանների, մարդաբանների հետ, ապա կարելի էր անել շատ ավելի լավ արդյունք տվող աշխատանք, եթե իհարկե գրքի ստեղծողների նպատակն էր կրթություն տալը, այլ ոչ թե իմիտացիա անելը: Նա գտնում է, որ չի կարելի հասարակությունից կտրված

օրենք ու որոշում ընդունել՝ գիրք հրատարակել: Պետք է հասկանալ, թե հասարակությունը ինչ մակարդակում է գտնվում և փորձել մեղմորեն նախապատրաստել հասարակությանը փոփոխությունների: Սակայն մյուս փորձագետը հակադարձեց, ասելով, որ «մեղմորեն» ասվածը չի կարող արդյունավետ լինել պետք է կտրուկ գործողություններով լուծել այս խնդիրը: Փորձագետը հիշեցրեց դեպքեր, երբ որոշ մարդիկ, ատելության խոսքի կամ քարոզի ազդեցության տակ՝ լսելով, որ ինչ-որ տեղ հավաքվում են գեյեր կամ սեռական այլ փոքրամասնություններ, հարձակվել են և փորձել են բռնության ենթարկել նրանց:

Փորձագետներից մեկը նշեց, որ պետք է հիմնական շեշտը դնել քաղաքական կուսակցությունների հետ աշխատանքի վրա, քանի որ եթե վերևից չկարողանանք փոխել իրավիճակը, մենք չենք կարող հացի խնդիր լուծող, կամ պապենական կարծրատիպեր ունեցող մարդուն փորձել բացատրել թե ինչ է սեռական դաստիարակությունը կամ ինչու է պետք զերծ մնալ սեռական հենքով խտրականությունից: Այդ մարդկանց մեջ մենք չենք կարող մեր քարոզով փորձել փոխել կարծրատիպեր, քանի որ իրենք անգամ լսել չեն ուզում այս թեմաներին առնչվող որեւէ բան:

Փորձագետներից մեկը կարծիք հայտնեց, որ պետք է ձևաչափեր մշակել, որպեսզի կարողանանք համոզել քննարկել այդ թեմաները: Նրա կարծիքով ԱԺ-ում տրանսգենդերի ելույթը սադրանք էր, և դա շատ սխալ ձևաչափ է խնդիրը բարձրաձայնելու և արդյունքի հասնելու համար: Եվ արդյո՞ք սադրանք չի լինի, եթե մենք սեռական դաստիարակության մասին գիրքը այս տեսքով պարտադրենք դպրոցներին: Սակայն մյուս կողմից էլ արդյո՞ք վտանգավոր չէ, եթե մենք շեշտը դնենք իրավունքի վրա, տալով բոլորին իրենց հասանելիք ազատությունը՝ առանց զարգացնելու ԼԳԲՏ ոլորտում մարդկային փոխհարաբերությունների մշակույթի մակարդակը: Մշակույթի զսպող ուժն է միայն, որ կարող է կանխել սեռական ազատության վերաճումը սեռական սանձարձակության: Այդ նպատակով կարեւոր է նման մշակույթ ձեւավորող գրականության ներդրումը հանրակրթության ոլորտ: Չէ՞ որ ԼԳԲՏ մարդիկ՝ մնացածի պես նախ անցնում են դպրոցական սոցիալիզացիայի փուլը: Եւ կարեւոր է առաջարկել իրենց՝ իրենց ինքնությանը համապատասխանող բարձր մշակույթ, որը կհամապատասխանի ներհասարակական համերաշխության սկզբունքներին, դրանով էլ՝ ինտեգրելով նրանց հասարակության մեջ, զերծ պահելով նրանց հասարակությունից ինքնամեկուսացումից, հակահասարակական վարքագծի ընտրությունից: Հասանելի լինելով նաեւ ավանդական սեռական ինքնություն ունեցող երեխաներին՝ նման գրականությունը թույլ կտա նրանց նոր լույսի ներքո դիտարկել այլ սեռական ինքնություն ունեցող համադասարանցիներին, առանց նրանց ոչ-

լիարժեք, ինքնին անբարոյական համարելու, այլ հակառակը՝ ընդունել, որ նրանք բոլորից ոչնչով չտարբերվող մարդիկ են, ով ոնի բացի սեռականից շատ այլ ինքնություններ եւ որ սեռական ինքնության վրա սեվեռվելը վնասակար է թե՛ իրենց եւ թե՛ իրենց շրջապատող մարդկանց համար: Այդպիսի գրքերից կարող է լինել, օրինակ, Պլատոնի «Խնջույք» եւ «Ֆեդր» ստեղծագործությունները, որոնցում նկարագրված է եւ փառաբանվում է հայտնի պլատոնական՝ վերմարմնային սերը, եւ հակառակը՝ բացասական լույսի ներքո է ներկայացվում է ֆիզիկական կապը: Անցումային տարիքում գտնվող 13-14 տարեկան պատանիների եւ աղջիկների համար, որոնք հատկապես խոցելի են սեռական վաղաժամ ակտիվության տեսանկյունից, այս ստեղծագործությունները կարող են սեռական վարքի եւ հոգեվոր զարգացման ճիշտ ուղենիշներ դառնալ: Ընդհանրապես, սեռական ակտիվության ամենաբարձր կետում գտնվող պատանիների համար հակասեռական որեւէ քարոզչությունը եւ դաստիարակությունը չի կարող արդյունավետ լինել: Ավելին, ներկայացվելով պետության եւ հասարակական բարոյականության դիրքերից՝ նման դաստիարակության փորձը կարող է հակառակ արդյունքի բերել՝ ընդհուպ պատանիների հակադրվելուն պետությանը եւ նորմատիվային հասարակական բարոյականությանը: Միակ արդյունավետ ճանապարհը ոչ թե հակասեռակն դաստիարակությունն է, այլ պատանիներին սեռականության մշակութային բարձր եւ ընդունելի կարգավորումներ առաջարկող տեղեկացումը, լուսավորչությունը: Իրականում, նման կարգավորումներ արդեն առաջարկվում են հետերոսեքսուալ աշակերտների համար՝ հանձին, օրինակ, «Ռոմեո եւ Ջուլիետի» կամ «Եվգենիյ Օնեգինի»: Նույնը ճիշտ կլինի անել նաեւ ԼԳԲՏ աշակերտների համար՝ ի դեմ Պլատոնի նշված ստեղծագործությունների:

Առաջարկություն եղավ լրջորեն զբաղվել կուսակցությունների հետ աշխատանքով և հստակ ծրագիր մշակել, որով կսկսեն աշխատանքները քաղաքական կուսակցությունների հետ: Փորձագետներից մեկը նշեց, որ իրենք ունեցել են հանդիպումներ տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների հետ և քննարկել են Հայաստանի Հանրապետությունում ԼԳԲՏ անձանց հետ կապված առկա խնդիրները ու դրանց լուծման եղանակները: Սակայն միևնույն ժամանակ նշվեց, որ այդ հանդիպումները այդքան էլ արդյունավետ չեն եղել, քանի որ այդ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները հետևողական չեն եղել այդ կուսակցություններում առկա հարթակներում սեռական ինքնության մասին քննարկում ծավալելու հարցում:

Նաև նշվեց, որ մեկ ներկայացուցիչ չի կարող ընդհանուր պատկերը փոխել, քանի որ խնդիրն ի սկզբանե պետք է դրված լինի փոխել ընդհանուր քաղաքական կուսակցության ներսում առկա մտածողությունը և կուսակցության

գաղափարական հենքը, այլ ոչ թե մեկ հոգու, ով մի քանի տարի հետո կարող է ընդհանրապես այդ կուսակցության անդամ չլինել: Այդ պատճառով առաջարկություն եղավ ստեղծել հստակ օրակարգ և ազատ, բաց քննարկումներ սկսել բոլոր կուսակցությունների ղեկավար մարմինների, կամ այն անձանց հետ, ովքեր զբաղվում են տվյալ խնդիրների վերհանմամբ և լուծումների հայտնաբերմամբ: Պետք է սկսել քննարկումներ քաղաքական կուսակցությունների հետ և փորձել խնդիրը լուծել՝ փոխելով քաղաքական կուսակցությունների դիրքորոշումները և խուսափելու համար հնարավոր մշակութային հակադրությունից:

Փորձագետներից մեկը կարևորեց վարչապետ Նիկոլ Փաշինյանի կոչը՝ այս հարցում բաց քննարկումներ ծավալելու: Եվ կարելի է կուսակցությունների հետ սկսել քննարկումներ, նույնիսկ եթե դեմ կլինեն հրապարակային քննարկումներին, կարող են կազմակերպել փակ հանդիպումներ, որպեսզի պետական մարմինները լսեն փորձագետների կարծիքը, առկա խնդիրները և առաջարկվող լուծման տարբերակները, քանի որ հասարակական կազմակերպությունները արդեն տասնյակ տարիներ զբաղվում են այս հարցերով և պետական մարմիններից ավելի շատ ինֆորմացիայի են տիրապետում և կարող են փորձը փոխանցել պետությանը, որպեսզի ավելի արդյունավետ լինեն հետագա աշխատանքները:

Փորձագետներից մեկը նշեց, որ այս քննարկումներում շատ կարևոր է, որ ոչ մի կողմ չընդունի ագրեսիվ հարձակողական կեցվածք, այլ ամեն ինչ մնա բանական քննարկումների տիրույթում: Եվ միայն քննարկումները կարող են բերել խնդրի լուծմանը: Դրական գնահատվեց այն հանգամանքը, որ գոյություն ունի սեռական փոքրամասնությունների իրավունքներով եւ խնդիրներով զբաղվող կազմակերպությունների կոալիցիա և բոլոր տվյալները հավաքագրվում են այդ կոալիցիայի շրջանակներում և կարելի է միանգամից վերցնել և օգտագործել այդ տեղեկատվությունը՝ ի նպաստ սեռական տիրույթում ատելության խոսքի և քարոզի հաղթահարմանը:

Հաջորդ փորձագետը նշեց, որ դժվար է կասկածի տակ դնել սեռական դաստիարակության արդյունավետությունը Եվրոպայում միայն այն փաստի հիման վրա, որ վերջին շրջանում այնտեղ եւս սեռական ոլորտում ատելության խոսքի եւ բռնությունների աճ է արձանագրվում: Այդ մայրցամաքում վերջին տասնամյակում ահռելի չափով ավելացել է ներգաղթը, այնպես որ բռնությունների ու ատելության խոսքի աճը կարող է կապված լինել նաև օտար մշակույթի կրող ներգաղթյալների ազդեցությամբ:

Նաև նշվեց, որ շատ կարևոր է հասարակության մեջ այն կարծիքը թե ովքեր են զբաղվում սեռական փոքրամասնությունների պաշտպանությամբ: Այժմ բազմաթիվ քաղաքացիներ մտածում են, որ այն մարդը ով պաշտպանում է փոքրամասնություններին ուրեմն ինքն էլ հենց ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչ է: Բայց կա նաև այլ տեսակետ, որ այդ մարդը չի կիսում այդ արժեհամակարգը և այն ինչ ինքը անում է, ուղղակի աշխատանք է իր համար, այսինքն անում է ստիպված՝ վարձատրության՝ գրանտների դիմաց: Եվ այստեղ կարևորն այն է, որ հասարակությունը գիտակցի, որ յուրաքանչյուր քաղաքացի, անկախ իր սեռական ինքնությունից/կողմնորոշունից պետք է հարգանքով վերաբերի մյուս մարդկանց անձնական կյանքին, սեռական ինքնությանը, նրա ցանկացած իրավունքի եւ պաշտպանի այդ իրավունքը:

Բերվեց նաև Մոնթե Մելքոնյանի կնոջ խոսքը, ով նշել էր, որ իր ամուսնու ամենամոտ ընկերը գեյ էր, սակայն հանրությունը ոչ մի կերպ չի անդրադարձել այս հարցին և լրատվամիջոցների կողմից այս հայտարարությունը լայնորեն չի լուսաբանվել: Եվ խնդիրը նաև այնտեղ է, որ բազմաթիվ քաղաքական գործիչներ անպատասխանատու կերպով շահարկում են ԼԳԲՏ համայնքի խնդիրները եւ ընդհանրապես սեռական թեման ի օգուտ սեփական շահերի՝ տուրք տալով պոպուլիզմին եւ հասարակությունում առկա կարծրատիպերին՝ դրանք փոխելու փոխարեն: Այդ պատճառով պետք է աշխատել հանրությանը հայտնի մարդկանց հետ, ովքեր վայելում են հասարակության սերն ու հարգանքը, որպեսզի իրենք դատապարտեն սեռական փոքրամասնությունների հանդեպ ատելության խոսքն ու ատելության քարոզը:

Բերվեց նաև Շուռնուխի հայտնի դեպքը, որի հետեւանով ոչ ոք չդատապարտվեց, և նույնիսկ պատգամավորների, հասարակական, քաղաքական գործիչների, պետական պաշտոնյաների կողմից են հնչել ատելության խոսք եւ բռնությունը խրախուսող կոչեր: Նաև լրատվամիջոցներում բազմաթիվ էր մանիպուլյացիան, երբ գրեթե չկար անդրադարձ դեպքերի բուն պատճառին: Օրինակ այն, որ Շուռնուխում ապրող այդ գեյը բազմաթիվ փաստեր էր հայտնաբերել գյուղապետի դեմ՝ կոռուպցիոն դրսևորումներ պարունակող, որի արդյունքում էլ գյուղապետը կազմակերպել էր նրա հետապնդումը՝ այլ, սեռական, աստառ հաղորդելով դրան: Սակայն մյուս փորձագետը նշեց, որ այդ տուժած երիտասարդը նույնպես ոչ միշտ էր նշում այդ փաստը, այլ շեշտը դրում էր ավելի շատ իր՝ սեռական փոքրամասնության ներկայացուցիչ լինելու հանգամանքի վրա՝ հավանաբար Եվրոպայում ապաստան խնդրելու հեռահար նպատակով, ինչն էլ տեղի ունեցավ ժամանակի ընթացքում: Այսինքն, շահարկումը երկուստեք էր, և երկու կողմն էլ առանձնապես չէին անդրադառնում դեպքի բուն պատճառներին:

Քննարկման արդյունքում առաջարկություն եղավ սկսել աշխատանքներ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների և ղեկավար մարմինների հետ, ինչպես նաև դպրոցներում ներդնել հանդուրժողականություն պարունակող, տարբեր սեռական խմբերին ճշմարիտ լույսի ներքո, առանց կարծրատիպերի ներկայացնող նյութեր, գրականություն, սակայն այնպես, որ դա չառաջացնի ագրեսիա հասարակության շրջանում: Աշխատել հոգեբանների և մեթոդիստների հետ և կատարելով ծավալուն աշխատանք ներդնել այն հստակ ծրագիրը, որը երկուստեք կբավարարի և արհեստական խոչընդոտներ չի առաջացնի: